



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

«Պատմական հուշարձանների և կուլտուրական մյուս արժեքների պահպանության նկատմամբ հոգատարությունը Հայկական ՍՍՀ քաղաքացիների պարտն ու պարտականությունն է»:  
(ՀՍՍՀ սահմանադրություն, Հոդված 66)

Ընդհանուր տեսքը ճյուղա-արևելից



Շխմուրդի վանքային համալիրը գրտնրվում է ՀՍՍՀ Շամշադինի շրջանի ծաղկավան գյուղից 6 կմ հարավ-արևմուտք, Հախում գետի անտառապատ գեղատեսիլ ձախափնյա ձորալանջին: Այն բնության և կառույցի ներդաշնակության լավագույն օրինակներից է: Ենթադրվում է, որ հուշարձանախումբն իր անվանումը ստացել է ոչ հեռու գտնվող հին բնակավայրի անունից: Կազմավորվել է XIII—XIII դարերում:

Համալիրը բաղկացած է Ս. Աստվածածին եկեղեցուց, երկու գավիթներից և «Խորանիկ» կոչվող կառույցից: Երջակայքում պահպանվել են մատուռի և օժանդակ շինությունների հետքեր:

Ս. Աստվածածին եկեղեցին հուշարձանախմբի գլխավոր կառույցն է: Հիմնադրվել է XIII դ. կեսերին: Իրականացված է տեղական դեղնավուն սրբատաշ շեշաքարով: Այն արտաքինից ուղղանկյուն (8,50×7,0 մ), ներքուստ խաչածե հատակագծով գմբեթավոր դահլիճ է: Արևելյան մասում ավագ խորանն է, որին երկու կողմից կից են կրկնահարկ ավանդատներ: Երկայնական պատերը ներսից ունեն կիսասյուներով ավարտվող մեկական որմնամույթեր, որոնք կամարներով կապված են միմյանց և ավագ խորանի եզրերից բարձրացող կիսասյուներին: Դրանց ստեղծած քառակուսի հիմքից առագաստային փոխանցումների օգնությամբ բարձրանում է զլանածն թմբուկը: Եկեղեցու արևելյան ճակատին կա երկու խորշ, որոնց կամարածե վերնամասերը ավագ խորանի և ավանդատների վերին լուսամուտների հետ պսակված են բնդհանուր գոտիով: Կառույցն ունի երկու մուտք: Դրանք բացվում են նրա արևմրտյան և հարավային ճակատներին կցված գավիթների մեջ: Արևմտյան մուտքը



Եկեղեցու հարավային ճակատը փոքր գավթից

եզերված է բարդ տրամատավոր երեսակալով, որի մեջ՝ մուտքի երկու կողմերում, ազուցված են եղել խաչքարեր (ներկայումս շին պահպանվել): Եկեղեցու ներքին և արտաքին որմերի այլ մասերում ևս կան նախազարդ խաչքարեր: Ավագ խորանի բեմի ճակատային հարթությունը մշակված է միմյանց հաջորդող երեք խոշոր կեռխաչերի (ավաստիկա) շարքով (բացակայում է երրորդ կեռխաչի մի մասը)՝ առնված քանդակազարդ շրջանակի մեջ:

Եկեղեցու վրա պահպանված հետքերը ցույց են տալիս, որ նորոգումներից մեկի ժամանակ նրա արտաքին ծավալների (ճակատների և թմբուկի) ուղղահայաց չափերն ավելացվել են մոտ 40 սմ:

Մեծ գավիթը գտնվում է համալիրի արևմտյան մասում: Կառուցվել է XIII դ. երկրորդ կեսին: Պատերը շարված են անմշակ քարերով, իսկ սյուները, կամարները, թաղերը և այլն՝ սրբատաշ են: Պատկանում է երկսյուն գավիթների տիպին (հայտնի մյուս օրինակը Սևանա լճի ափին գտնվող Հայրավանքի գավիթն է): Այն քառակուսի հատակագծով (10,30×10,30 մ), ութանկյուն կտրվածքի երկու սյուներով իրականացված կառույց է՝ ծածկված թաղերով և սրակված երդիկով: Մուտքը հարավային ճակատի արևմտյան եզրից է:

Մեծ գավիթը և եկեղեցին իրենց հյուսիսային պատերով հպված են ժայռերին: Փոքր գավիթը կից է եկեղեցու հարա-



Ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից

Ընդհանուր տեսքը հյուսիս-արևելքից

Խաչքար եկեղեցու հարավային մուտքի մոտ



վային ճակատին: Կառուցվել է մեծ գավիթից հետո, հավանաբար XIII դ. վերջին քառորդում: Այն քառակուսի հատակագծով (7,0×7,0 մ), առանց սյուների, սրբատաշ քարերով շարված կառույց է եղել: Ներքուստ մնացել են շորս որմնասյուները, որոնցից սկզբնավորված կամարներին հենվել է երդիկավոր ծածկը: Մուտքը եղել է արևմուտքից:

«Խորանիկը» գտնվում է համալիրի արևելյան մասում և իր մուտքով բացվում է փոքր գավթի մեջ: Անմշակ քարերով շինված միանավ թաղակապ եկեղեցի է՝ ալժմ ավերակ: Պահպանված կիսաքանդ պատերի մեջ նկատելի են դրանց երկայնքով թողնված ակոսները, որոնցում երբեմնի տեղադրված գերանները կառույցին հաղորդել են երկրաշարժակայունու-



Գավթի ներքին հորինվածքը



Արձանագրություն գավթի հյուսիս-արևմրտյան սյան խոյակին

թյուն: Արևմտյան պատի շինարարական արձանագրության համաձայն ըստ Հովհաննես Սարկավազի տոմարի կառուցվել է 1149 թ. (փաստորեն հուշարձանախմբի հնագույն կառույցն է): Նույն արձանագրության մեջ հիշատակված «գիտրանիկա» բառից կառույցն ստացել է իր անվանումը:

Շխմուրազի վանքը XVII դ. ապրել է որոշ վերածնունդ: Այդ մասին վկայում են հուշարձանների վրայի վերանորոգումների հետքերը և շրջակայքում գտնվող թվակիր արձանագրություններով խաչքարերը: Արժանահիշատակ է եկեղեցու հարավային մուտքի մոտ դրված մարդկային պատկերաքանդակներով խաչարձանը: Այստեղ է գտնվում նաև նշանավոր Քի-

րամ կազմողի խաչքարերից մեկը (չարդված):

Համալիրի հյուսիս-արևմտյան կողմում վեր խոյացող վիթխարի ժալոզանգվածի գագաթին գտնվում են կալ Քար անունով կիկլոպյան ամրոցի (մ. թ. ա. VI—IV դդ.) ավերակները, իսկ հուշարձանախմբին հյուսիսից հարող անտառային ճանապարհով մի քանի կմ դեպի արևմուտք պահպանվել են հին բնակատեղերի (Նաչաղլուր, Քարագեղ, Սպիտակ Ջուր) շինությունների մնացորդներ: Վերջինների մոտակայքում գտնվում է միջնադարյան կիսաբանդ մի մատուռ:



«Խորանիկի» շինարարական  
արձանագրությունը

Քարտաշյան Հրաչյա Կամոյի  
ՇԽՄՈՒՐԱԿ

© ՀՍՍՀ պատմության և կուլտուրայի  
հուշարձանների պահպանության ընկե-  
րություն

Մասն. խմբագիր՝ Գ. Ս. Շախկյան  
Խմբագիր՝ Ս. Վ. Ստեփանյան  
Նկարիչ՝ Ս. Ս. Մկրտչյան  
Տեխն. խմբագիր՝ Ա. Գ. Ասրյան  
Վերստուգող սրբագրիչ՝ Գ. Հ. Ղազարյան

Հանձնված է շարվածքի 21.07.1986 թ.:  
Ստորագրված է տպագրության  
14.07.1987 թ.: Ֆորմատ՝ 84×108<sup>1</sup>/<sub>32</sub>,  
Քուղթ՝ «Կավենպատ», տպագր. 0,42  
պայմ. մամ. հրատ.՝ 0,4 մամ.: Պատվեր  
773: Տպարանակ 10000: Գինը 15 կոպ.:  
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրա-  
ֆիայի և զրքի առևտրի զործերի պետա-  
կան կոմիտեի № 2 տպարանի մասնաճյուղ,  
Մարշալ Բաղրամյանի պող. № 26: